

118. ՄԱՐԹ ՄԸՌՆԸՑՆՈՂ ԴԵՐԸ

Մին շենում մին դեր ա ինում, էտ դերն էլ պեն չի ինում գյիդալիս, փորումը ալիփպենու կուտուր չի ինում, մրեռալն էլ միշտ մենակ ար օրթնում, հանցու վրեր ժողովուրթը գյիդալ վուշ, վրեր օրթնելը գյինդում չի։ Ժուղովուրթն էլ էտ պենը գյիդալիս ըն ինում, մին մարթու պիրում ըն սուտբսուտ մրռնըցնում, տինում զորումը, վրեր տանեն տինին ժամումը, հանցու վրեր դերն օրթնե։ Էտ մարթին էլ սուվրրցնում ըն, ասում զորումը տապուտ կըկենաս, վրեր տրեսնաս դերը հանդրա-բանդրա խոսում ա, եր կըկենաս զորումը դիքյ նըստրես։

Էտ ամբեռալըդ վրեր զորումը տիրած տանում ըն ժամը, ժուղովուրթն էլ ժամբեն հըյաթումը թուփ տրեռած կենում ըն, վրեր դերը պըրծնե, նոր ուրանք նի մնրբեն։ Դերն էլ մին էրկու-իրեք խոսկ ա ինում գյիդալիս՝ ալելույա, տաեր ողորմյա, իտի մին քանի պեներ։ Տահանք վրեր ասում ա, պըրծնում, էլ ըսելի պեն չի ինում, ըսկսում ա փուռվառը տես ու տեն տանել-պիրիլը, ամբեռալըդ եր ա կենում զորումը դիքյ նըստում։ Դերն էլ միբրեն չանավ ա ինում, փուռվառը վրեր ա տինում, հոխտ ծրեռքավ էտ մարթին պըկան փըռնում, խեխտում, ըսպանում, զորումը պըրբնվցնում։ Ետեան քյինում ա տունումը հըվաքված մարթուքը ասում.—Գյինդում չըմ, թա տուք հինչ տրեսակ ժուղովուրթ ըք, վրեր մրեռալը կարթրեն մրռնըցնում չըք, ետեան պիրում, մինչև մրռնըցրե, հոքիս տուս եկու։